

«Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարենցի, հատոր Ա, 1780—1785», աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 595 էջ:

Մաշտոցի անվան մասնագետներ ողջունելի որոշում է կայացրել պարբերաբար հրատարակելու իր դիվանական բազմահատոր վավերագրերը: Քաջահայտ ճշմարտություն է, թե ինչքան կարևոր ու լիարժեք են դրանք հայ ժողովրդի քաղաքական պատմության, սոցիալ-տնտեսական, իրավական վիճակի, մշակութային և հոգևոր-բարոյական կյանքի ուսումնասիրման համար: Դրանք հաճախ եզակի սկզբնաղբյուրներ են հայ գաղթօջախներում ապրող հայության, առանձին հայ հասարակական-քաղաքական և մշակութային գործիչների կյանքն ու գործունեությունը հետազոտելու տեսանկյունից: Այս ճշմարտությանն ավելի ենք համոզվում, երբ ընթերցում ենք սույն Երախայրիքը՝ Վ. Գրիգորյանի աշխատասիրությամբ լույս ընծայված «Դիվան հայոց պատմության» առաջին գրքի առաջին հատորը: Այն յուրովի շարունակում է Գյուտ Աղանյանցի 1893—1917 թթ. իրականացրած 13 համաբնույթ գրքերի հրատարակությունը և ըստ էության սկզբնավորում նոր մատենաշար՝ շատ անհրաժեշտ ու շահեկան: Հատորը վերաբերում է հայ ժողովրդի պատմության առավել բարդ ու դժվարին ժամանակահատվածին՝ XV-XVIII դարի 80-ական թվականների իրադարձություններին: Այնտեղ ընդգրկված են Ղուկաս Կարենցու 1780—1785 թթ. գրած նամակներն ու զանազան գրությունները՝ 1776 միավոր: Ղուկաս Կարենցին, իբրև ամենայն հայոց հոգևոր պետ՝ կաթողիկոս, այդ ժամանակ նաև հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի նշանավոր դեմքերից մեկն էր: Հայ իրականությանն ավելի ժամանակաշրջանի գրեթե բոլոր կարևոր իրողություններն ու իրադարձությունները որևէ կերպ առնչվում էին նրա գործունեությանը: Ըստ այսմ հատորում ամփոփված վավերագրերը, իբրև այդ ամենի անմիջական արձագանք ու վկայություն, ստանում են պատմական, ճանաչողական բացառիկ արժեք ու նշանակություն: Այս վավերագրերի շահեկանությունն էլ հենց աճում է նաև այնու, որ վերաբերում են ոչ միայն Հայաստանի տարածքի վրա, այլև մերձակա ու հեռավոր հայ գաղթօջախներում՝ Թուրքիայում, Պարսկաստանում, Հնդկաստանում, Քաղղաթում, Երուսաղեմում, Հոլանդիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Ռուսաստանում և այլուր ապրող հայության պատմական անցյալին: Այս կարևոր հանգամանքով դրանք շատ են նպաստում նաև հիշյալ երկրների պատմությանը, սոցիալ-քաղաքական ու իրավական դրությանը ծանոթանալուն և կարող են ընդգրկվել արժեքավոր սկզբնաղբյուրների մեջ:

Հատորում զետեղված նամակների մեջ կան այնպիսիները, որոնք ուղղված են Ռուսաստանի, Վրաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Ավստրիայի պետական, քաղաքական, ռազմական և վարչական երբեմն ամենահեղինակավոր ու ազդեցիկ գործիչներին: Այս հանգամանքով դրանք կոնկրետ հնարավորություններ են ստեղծում ավելի հստակ ու հանգամանալից պատկերացում կազմելու հիշյալ երկրների արևելյան քաղաքականության, հատկապես Անդրկովկասի ու Հայաստանի նկատմամբ որդեգրած քաղաքական վարքագծի մասին: Ի տարբերություն պատմագրական ամբողջական երկերի, մասնավոր, երբ դրանք տվյալ ժամանակաշրջանում պակասում են, հիշյալ վավերագրերն ավելի ստույգ, հատկապես ներքին կյանքի նույնիսկ դժվար մատչելի ծախքերը տեսողաշարի մեջ պահած, «մանրուքներն» անգամ շանտեսող՝ երբեմն անփոխարինելի վկայություններ են: Միանգամայն ընդգծելի են դրանց տեղեկատվական հարստությունը, բազմազանությունը, արժանահավատությունը՝ մասնավորաբար հայ և անդրկովկասյան մյուս ժողովուրդների ոչ միայն քաղաքական, տնտեսական, իրավական հարստահարությունների, հարկային ու վարչական կեղեքումների պատկերը ուրվագծելու և ամբողջացնելու համար, այլև նույն ժողովուրդների փոխադարձ առնչությունները լուսաբանելու տեսանկյունից: Դրանք առանձնակի նշանակություն են ստանում վանական վարչատնտեսական համակարգի ուսումնասիրման համար: Վանքը, իբրև խոշոր ավատական վարչատնտեսական միավոր, առավել հաճախակիությամբ ընդգրկվում էր նաև համընդհանուր տնտեսական գործառնությունների ոլորտը, բայց ուներ իր ուրույն դասերությունները, որոնց լուսաբանումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Պատմաբանները դրադիվ են շարունակում են զբաղվել այս խնդրով: Շատ ուշագրավ են վանական ճորտերի, վանքի «տերունի ժողովրդի» և «տերունի կալվածքների», ինչպես նաև օտար իշխողների՝ դրանց նկատմամբ ցուցարհրած վերաբերմունքի մասին տվյալները: Կարևոր են վանքին վճար-



վող հարկերի և այդ առիթով երբեմն տեղի ունեցած գյուղացիական ընդվզումների վերաբերյալ հիշատակումները, նվազ հետաքրքրական չեն առևտրական գործարքների, ապրանքների տեսակների, անդամությունների կարգի, միջոցների ու վարձի, նաև շափերի ու կշիռների, դրամի՝ երկրից-երկիր տեղափոխելու եղանակների մասին հաղորդված տեղեկությունները:

Հայ պատմագիտության մեջ արժարժված հետաքրքիր թեմաներից է ունիթոնների, ֆրանկների, ախթարմանների դեմ հայ ժողովրդի մղած պայքարը: Այս առնչությամբ ես հատորում ամփոփված է առատ և արժեքավոր նյութ, որը փարատում է այն տարակուսանքը, ըստ որոնց էջմիածինն ու իր զահակալը՝ Ղուկաս Կարնեցին, իբր մեղմ ու պասսիվ են եղել վերջինների նկատմամբ: Ղուկաս Կարնեցին, հրատարակված հիշյալ վավերագրերի հավաստումներով, ամեն-նեխն էլ տկար, վեհերոտ անձ չի եղել: Նա երբեմն դիվանագիտական ճկուն, գուցե և դաշտավոր, բայց նաև համարձակ քայլերով շատ օգտակար է եղել հայ ժողովրդի և՛ հասարակական-քաղաքական, ներքին, հոգևոր-բարոյական կյանքը բարվոքելու, նրան արյունալից բախումներից փրկելու, և՛ Մայր աթոռը, նրա կալվածքներն ու ինքները ասպատակություններից ու կողոպուտներից հաճախ ապահովելու գործում:

Ընդհանրացնելով ասենք, որ հատորում տեղ գտած հիշյալ վավերագրերը փաստագրական, ճանաչողական միանգամայն առատ ու լիարժեք նյութ են մատակարարում հայագիտությանը, կովկասագիտությանը ու արևելագիտությանը միաժամանակ: Բնական է. այս հանգամանքը մեծապես արժեքավորում է նաև բուն ձեռնարկը՝ առաջին հատորի սույն հրատարակությունը: Այն իրագործված է հմտությամբ, գիտական կուռ և իր բնույթին լիովին համապատասխան եղանակով, պատմագիտության ու բնագրագիտության ներկա պահանջներին համապատասխան:

Ընդարձակ ներածությունը մի ուրույն ուսումնասիրություն է նյութին քաջատեղյակ հեղինակի կատարած հանգամանալից քննության, արձանագրված փաստերի ստույգ ընտրության, ըստ տեղի, հանգամանքների և բերած շահեկանության՝ իմաստավորման ու գնահատման, նշանակալից արդյունք: Այստեղ ներկայացված է ըստ ամենայնի արժեքոված են այն բոլոր գլխավոր բնագավառներն ու կետերը, որոնց վերաբերյալ վավերագրերը կարևոր վկայություններ են հաղորդում: Այսքան բազմազան ու հարուստ տեղեկությունները ընդգրկելով պատմագիտական, քրեական ընդարձակ տեսադաշտի մեջ, Վ. Գրիգորյանը օրյեկտիվորեն հանգել է գիտական ստույգ եղրակացությունների: Այս ամենն արված է առանց սպառնի խոսք ասած լինելու ծրագրի ու հավանություն, համարելով, որ նյութը դեռ նոր և առաջին անգամ է դրվում մասնագետների տրամադրության տակ և սպասում է հետագա բազմակողմանի ուսումնասիրման:

Հրատարակության գիտական օժտվածությունն ու շահեկանությունն ավելի են շեշտում առընթեր ծանոթագրությունները, օտար բառերի ու տերմինների բացատրական բառարանն ու անվանացանկերը:

Մի երկու նկատառում. ցանկալի էր, որ ներածությունը, իբրև նոր մատենաշարի առաջին հատորի առաջաբան, քիչ ավելի անդրադառնար մանավանդ զաղթօջախներում ապրող հայերի վերաբերյալ նյութերին, վանական տնտեսության համակարգի առանձնահատկություններին, վարչավիճակագրական բնույթի հարցերին, էջմիածնի Մայր աթոռի արտաքին և ներազգային հասարակական, տնտեսական ու մշակութային հարաբերություններին: Նամակների բուն բնագրերի փոխարեն երբեմն նախընտրելի է համարվել դրանց համառոտ բովանդակությունը ներկայացնել: Ինչքան էլ դա բացատրելի լինի, բայց ակադեմիական բնագրական այսպիսի լուրջ հրատարակության դեպքում, թերևս, ավելի նախընտրելի էր տալ բուն բնագրերը. այսօր ավելորդ թվացող մանրամասնը վաղը կարող է այլ իմաստ ու արժեք ստանալ:

Օտար բառերի բառարանում «կոնքետ»-ը (սխալմամբ «կոնփետ» է տպված, էջ 564) պարզապես իբրև «հայրապետական զգեստավորության զարդ» է դիտված, մինչդեռ այն հովվական մախաղի իմաստ ունի և խորհրդանշում է կաթողիկոսի հովվապետական իշխանությունը: «Նորաթուխ» (էջ 20) չի լինում քահանան, այլ՝ «նորընծա», զորաբանությունը՝ «դատարկաբանություն» է նշանակում և ոչ՝ «զրպարտություն» (էջ 23):

Վ. Գրիգորյանի՝ տարիների ընթացքում ջանասիրաբար աշխատասիրած առաջին հայ հատորը, անտարակույս, ներկայացնում է պատմագրական և պատմաբանական նշանակալից հետաքրքրություն ու արժեք: Այն միանգամայն հմտալից ու շահեկան հրատարակություն է:

ՓԱՅԼԱԿ ԱՆՔԱՊՅԱՆ

Բաճախական գիտությունների քեկեածու